ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի պետի տեղակալը՝

1. Իրականացնել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը՝ գույքի վրա արգելանք դնելու, սահմանափակում կիրառելու (շարժական գույքի նկատմամբ), այն առգրավելու և հարկադիր իրացնելու (աճուրդ կամ ուղղակի վաճառք) միջոցով.
2. Իրականացնել պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու գործառույթը.
3. Իրականացնել այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելու գործառույթը.
4. Իրականացնել պարտապանին պատկանող բնակարանների, շենքերի և շինությունների բացման, պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց զբաղեցրած բնակարանների, շենքերի և շինությունների բացման, զննության, ինչպես նաև պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց մոտ գտնվող պարտապանի գույքի առգրավման հետ կապված կատարողական գործողությունները.
5. Իրականացնել կատարողական վարույթի հարուցման և կատարողական վարույթի հետագա ընթացքի ապահովումը՝ (ավարտ, կարճում, կասեցում և հետաձգում) օրենսդրության դրույթներին համաձայն.
6. Ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցված դրամական միջոցներն ըստ կատարողական վարույթների բաշխման գործընթացի ապահովում, մասնավորապես՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին հաշվապահությունից պահանջել փոխանցումների վերաբերյալ տեղեկատվություն և մեկ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել նշված գումարների բաշխումը և բաշխման տեղեկանքը ներկայացնել հաշվապահություն.
7. Հսկողություն իրականացնել պետական բյուջեի օգտին հարուցված կատարողական վարույթների նկատմամբ.
8. Իրականացնել Բաժին ներկայացված դիմում-բողոքների ըստ էության քննարկում և օրենքով սահմանված ժամկետում պատասխանի նախագծի պատրաստում.

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության բաժնի պետի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: